

ԲԱԺԱՆՈՐՈՂ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Պաշխարհոյ համար	
Տարեկան	12 Ֆր.
Վեցամսեայ	6 »
Բաժանակի համար	
Տարեկան	15 »
Վեցամսեայ	8 »
Ստանդարտի համար	
Տարեկան	3 Տր.
Վեցամսեայ	1.50 »
ՎԱՆՔԻՆ ԿՆՆՈՒՄ	

Վանքի մասին տարբեր տեսակի և քանակի համար 40 սանթիմ կ. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ կ. երեքին տեսի անբաժանու համար 20 ժողովուրդի կրթության:

Պաշխարհոյ համար ձեռքի
(15 ՍԱՆԹԻՄ)

ՇԱՐՄ

ՄԱՍԿՎԱ ՍՏԱՆԻՆ ԲԱՆԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԵՎ ՀՐԱՏԱՐԱՐՈՒԹ ԶՈՐԻՖՇԱՐՄԻ ԵՒ ՇԱՐՄ ՕՐԵՐԸ

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

R. P. Kalémecarian
Mechitharistengasse W. 4
Vienne
(Autriche)

Redakция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна.
Redaction du journal
«Charjoum»
Varna (Bulgarie)

Գրութեան և յին տեսի
Մասկա և Գրաւ Գրկի
Պաշխարհոյ համար
Վանքի մասին տարբեր տեսակի և քանակի համար 40 սանթիմ կ. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ կ. երեքին տեսի անբաժանու համար 20 ժողովուրդի կրթության:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Մեր բաժանորդներէն, որոնք վճարած չեն, կը խնդրենք անյայտ զրկել բաժանագիրները, որովհետեւ առաջին վեցամսեան կը լրանայ Բաժանորդները պէտք է հասկնան որ թերթը ստակով կելլայ:

ԵՐԱԶ

Երազը աղուոր բան է քունի մէջ, երբ միտքդ՝ երկար ու տաժանելի խոնջանքէ մը ետքը, թօթուած օրուան յոգնութիւնները, լիազոր կարչաէ երեւակայութեան անեզր ովկիանին վրայ:

Երազը աղուոր բան է մանուանդ այն ատեն, երբ իրականութեան, կեանքին մէջ ամէն ինչ կը հակառակի կամքիդ ու ձգտումներդ, ու անոր մէջ կը դանդաղ միայն գոհացումը անոնց, և վայրկեանիստ կերպով, գոնէ քունի մէջ երջանիկ կըլլաս:

Իայց երազել ցերեկ ատեն, ան ալ բաց աչքերով լաւ բան չէ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԻՆԳ ԴԵՄԻՏԵՐ ՊՈՒԼ-
ԿԱՐ ՅԵ ԱՓՈՒՆՈՒԹԵՆԷՆ

(Ք. Ք. Ի)

(Ծար. Ասի. Բիւիւն և Վերջ)

Յեղափոխութեան հոսանքին մէջ նետուողներէն եւ ապստամբութեան մասնակցող գործիչներէն եւ ոչ մին այնքան պայծառ ու ջիւղ ինքնագիտակցութեամբ ներշնչուած, եւ անոր հետեւանքներուն իրազեկ եղած է որքան Բապտիզմով: Նա հաւատացած էր որ յեղափոխութիւնը կործանումով պիտի վերջանար, բայց իր տրամաբանութիւնը արդի մաթիմատիկական ճշմարտութիւններու վրայ կը թնայ, իբր սկզբնական պահանջներու անխուսափելի արդիւնք կը նը-

կեանքի տագնապներուն, դժուարութիւններուն առջեւ փորձանակ գօտէպնդելու, արգելքները վերցնելու, խութերը վերելու երբ ձեռքերդ ծալած, անգործ թուութեան մը մէջ թող կուտաս երեւակայութեանդ որ ամէն ինչ հարթէ, մաքրէ և ոսկի ծիրով մը շրջանակէ, պարզ թունաւորութ մը կըրած կըլլաս որով կամքդ կը տկարանայ, շիջերդ կը թունան և կենսական գործոն ուժերդ կը սպառին:

Այսօր ո՞րչափ թուլամորթ երազատեսներ ունինք մեր մէջ: Երեւակը խօսելով, մեր՝ թէ արտասահմանի և թէ քուն հայրենիքի կեանքը նախանձելի կողմեր չունի, և մարդ իրաւամբ շատ անգամ կը սարկուի երազի վրայ մտածելու: Աւ մենք չենք կրնար արգիլել մեր տարաբաղդ հայրենակիցները որ գէթ երեւակայութեամբ քիչ մը չի խմեն երազներու անուշ գինիէն: Բայց ազգային ինքնասպանութեան և ինքնամոռացման չե՞նք առաջնորդեր մեր ժողովուրդը երբ երազներուն գերը անհա-

տական նեղ շրջանակէն դուրս հանելով, կուղենք անով ամբողջ ազգը վարակել:

Օրինակի համար վերջերս մարդուն մէկը ելաւ և ըսաւ թէ՛ ալ մեզի յոյս չիկայ ոչ եւրոպայէն և ոչ ալ Ամերիկայէն. թէ Ռուսը մեզ կըլլել կուզէ և այլն, ուստի մեր և թուրքին շահը կը պահանջէ որ երկրին վերահաս վտանգը հասկնալով ջանանք զանի փրկել համերաշխ գործունէութեամբ:

Եւ որովհետեւ Անգլիական առածի մը համաձայն «փոքրիկ ապուշին համար մարդկութեան իտէալը մեծ ապուշն է», ուրիշ կարգ մը մարդու կենք ալ արձագանգեցին այդ մտածումը և միտք յոգնեցուցին անոր վրայ:

Չեմ ըսեր թէ այդ մարդիկ սուտ կամ գէշ կը խօսին ու կը մտածեն: Արդէն մեր յեղ. ընկերութիւնները իրենց սկզբնաւորութենէն ի վեր միշտ աշխատած են ու կաշխատին հաշտ կերպով ապրիլ տարբեր ցեղերու հետ, և յայտարարած են միշտ որ իրենց կուրք բարբարոս ուժ-ժիմի մը գէժ է, և ոչ թէ ցեղային կամ կրօնական:

Սակայն անցեալին մէջ չը յաջողած այդ փորձը կարելի՞ է միթէ այսօր իրագործել, երբ մէկ կողմէն սպաննելու, թալանելու բնազդը զարգացած է անպատիժ, միւս կողմէն ալ վրէժի գաղափարն է որ կը մխայ, հետզհետէ կուժողլայ:

Դիցուք թէ մենք աւելի խելացի, աւելի վարպետ գտնուելով յաջողինք այդ վրէժի զգացումը սպաննել և կամ կեղծել, մոռնալ անցեալը, կրնա՞նք վստահ ըլլալ որ բարբարոս կառավարութիւն մը, բարբարիկ ժողովուրդ մը երբէք պիտի կրնան հասկնալ մեզ: Չէ՞ մի որ այսպիսի համերաշխական ձեռնարկ մը կամ մտածում մը մեր կողմէ տկարութեան նշան մը պիտի համարուի:

Ըսելիք չը կայ, եթէ երբէք թուրք կառավարութիւնը՝ վերջապէս խելքի եկած ինքնաբերաբար մտածէ այդ կէտին վրայ, և ջանայ իր հպատակները սիրաշահիլ անոնց համեստ պահանջները գոհացնելով:

Դարձեալ բան մը չենք կրնար ըսել, եթէ այդ համերաշխական ոգևով գրուած քննքը թուրք ժողու-

կատեր զայն, որովհետեւ հետեւեալը առանց պատճառի գոյութիւն չէր կրնար ունենալ: Իր հայրենիքի ողբայի կացութիւնը, հզօր պատճառ մըն էր հետեւութիւնները շղթայելու, ինչպէս, թշուառութիւն, բողոք եւ յեղափոխութիւն, որոնցմէ ծագելիք նախճիրներէն ու աղէտներէն ալ նա բարիք կը սպասէր, եւ որպէս զի այդ բաղձանքին իրաւունքը ունենար, ինքզինքը նուիրած էր անոր առաջին գոհը ըլլալու:

Այսպէս առաջին անգամ նա յղացաւ Պոլիս երթալով ուրբաթ օր մը, սէլավլըքի արարողութեանը միջոցին Սուլթանը սպաննել, այն համոզմամբ, որ այդ սպանութիւնը նշան մը կըլլար քրիստոնէից միահամուռ ջարդին, որի հետեւանքով յօգուտ իրենց եւրոպան պիտի միջամտէր:

Սակայն ճակատագրը խարդախօրէն դաւադրեց իրեն: Ոչ ոք ասոր պէս անգութ հարուած մը կրած է: Նա՞ որ ազատութիւնը կը սպասէր, յեղափոխութեանէն եւ անխուսափելի եղած

ջարդերէն, ճիշդ գոհուելու ըրպէն, տեսաւ իր քաղաքացիներուն (՝) զորոնք իր շնչովը վառած եւ իր ոգիովը քաջալերած էր—ապստամբութիւնը յանկարծ իրեն գէժ:

Ասոնք զայն միայն երեսի վրայ թողով ու մերժելով չը բաւականացան, ձեւրակալեցին ու բանտարկեցին զինքը իր մի քանի հաւատարիմ ընկերներովը պատրաստուեցան զայն մատնել յառաջացող թուրք բանակին, իբր փոխարինութիւն այն պատրանքին եւ մոլորանքին ուր խրած էր զիրենք Բապտիզմով:

Ո՞վ կարող պիտի ըլլայ պատմելու իր կրած մահաոգի թառապանքը այդ երկար ու անվերջ ժամերուն մէջ, երբ իր բանտէն կը դիտէր վատ վարմունքը ժողովուրդին՝ զոր պատրաստած էր

(՝) Բապտիզմով Գորբիվիչիցա ծնած է, իրեն դաւաճանողը, իր բուն համաքաղաքացիներն են, բան մը որ շատ ծանրապէս ազգած է իր վրայ, եւ ուրուն ցաւը, ինչպէս կըսեն, մինչեւ իր վերջի ըրպէն չէ մոռցած:

միւրճուիլ իրեն հետ միասին արեան ու աւերուներու ծովուն մէջ. սակայն իր հոգու վեհութիւնը իրեն սփոփանք կուտար որ ժողովուրդը դաւաճանելով իրեն՝ փրկուէր թերեւ վերահաս աղէտներէն:

Սակայն այդ դաւաճանութիւնը մինչեւ վերջին կէտը գործադրուելու սահմանուած չէր, նախ քան թուրքերու յառաջխաղացումը, Բանակալ իւլյուէէն հրոսախուժ մը շտապաւ կը հասնի, բանտին գոննքը կը կտորէ եւ գերին իրեն հետ կը տանի:

Այս հրոսախուժին պարագլուխն էր Պօպէթով:

Այս անակնկալ ծառայութիւնը յաւերանա կապեց իրենց անունները պատմութեան մէջ, ինչպէս որ զոհուներու ու գաղափարներու նոյնութիւնը իրենց կեանքը արդէն կապած էր:

Բէթլէջով յեղափոխութեան առաջին շարքերուն մէջ չէր, ինչպէս

ԲԱՅ ՆԱՍԱԿ

ՖԻԼԻՊԻ ՄԷԿ ԹՈՒԳՈՎ

ՍԱՐԵԼԻՔ «ԿԱՅՄ»ԻՆ

Բարիպտուղ «Կայծ» !
Ժամանակէ մը ի վեր անձիս և մանաւանդ մանկապարտէզներուն շուրջը կը սլքտկաս մութի մէջ, գիմակի տակ ապաստանած :

5—10 անգամ գրած բազմաթիւ սուտերու պէտքէն հիմա չուզեցի հերքում մը տալ, վասն զի պատասխանելով այդ բոլոր լրբութեանց, կերպով մը յարգած պիտի ըլլայի քեզ :

Իսկ ես չեմ կրնար յարգել քեզ յաման արարած մը որուն «միակ» զբաղումն է. ինչպէս կերելի, անդուռն բերանով ասու ան զրպարտել : Բայց որպէս զի միանգամ ընդ միշտ խայտառակութիւն և ուրիշ անգամ չի կարողանաս օձի նման թունաւորել, կը զիջանիմ երկու խօսք ընել և պարզ առաջարկ մը ուղղել քեզի : Գիտնոս որ ալ ես փախուստի ճամբայ չունիս :

Այո՛, ինձի դէմ վճարող մը կայ որ 100 Ֆրանք տուգանքի կը դատապարտէ զիս եւ որ սակայն վերաքննելի է, և հետեւաբար դեռ ես ո՛ր և է ուժ չունի :

Գիտեմ դուն կուզես գործը աւելի կնճոտել, սակայն բոլոր գալարումներդ պարապը պիտի անցնին, որովհետեւ ես չիպիտի զբաղիմ այդ խնդրով մինչեւ որ չի վերջանայ : Անհոգ եղիր, այդ մասին ալ կը տեսնուինք քեզ հետ, և մեր համբաւաւոր դատին մէջ ալ քու կատարած սողունի գերդ կը պարզեմ աշխարհին առջեւ : Ատեն կայ դեռ : Հիմակու հիմա դուն ուզածիդ չափ շուր պղտորէ՛, խառնակէ՛, ապահով եղիր որ քեզի պատասխանող մը չի պիտի ունենաս :

Վուրդին շամբուն թուրք լեզուով, և կարծեմ՝ այդ երազատեաները այդչափ բան հասկնալու խելք պէտք է ունենային :

Իսկ եթէ այսպիսի երազներով կուզեն ազգը օրօրել, և կամ իրենք զիրենք մեծկակ քաղաքազէտներ ներկայացնել, ո՞վ կարգիլէ զիս ալ երազելէ :

Այս, սա կովկասական ցեղերը, ինչո՞ւ փոխանակ զիրար ըզլտելու չեն միանար. և ալեւոր հարուած մը տալով Ռուսին կովկասեան հասարակագետութիւն մը չեն հիմներ :

Այս, սա ապուշ Պարսկաստանը որ այսօր Ռուս Անգլիական էնթրիքներու խաղալիքը դարձած է, ե՞րբ խելքի պիտի գայ, սուս պիտի քաշէ հայերը, անոնց ձեռքով վերակազմելու իր բանակը ու գանձարանը, և միացած Աֆղաններու, Հնդկաստանցիներու և Զինելու հետ... «տէ պապամ» :

Ահա ծով ծով երազներ ալ ինձմէ. բայց ասոնք իրականութեան մէջ մազի շափ օգուտ մը չունենալէ զատ՝ որչա՞փ կը կաշկանդեն մեր ուժերը, որչա՞փ անգործ ու մեղապարտ ծուլութեան մը կը մատնեն մեր ժողովուրդը, հեռու պահելով զանոնք մեր փրկութեան ապուէնը և միակ յոյսը ելուց Յեզափոխութենէն :

Երազի՛նք, հոգ չէ, բայց միայն քունի մէջ :

ՎԱՀԱՆ ՄԱՆՈՒԵԼԵՆ

ՄԱՍՈՒԼԻ ԶՈՒՐԶԸ

Երբ երկար դադարէ մը ետքը կը վերագտնամ Շարժումի, առաջին գործս կը ըլլայ այցելել անոր խմբագրական-գրագարանը, հասկնալու համար թէ՛ վերջին տարւոյս մէջ գրական և գիտական ի՞նչ նոր գրքեր հրատարակուած են արաստածանի և մանաւանդ Պուլկարիոյ մէջ, նպատակ ունենալով անոնց մէկ համառօտ հաշուեկշիռը ներկայացնել Շարժումի ընթերցողներուն :

Պէնքօսքի, Վօլով, Քապլէշքով և Պօպէքով : Նա անոնց հասարակագալիք անկախ ու բոցավառ հայրենասիրութեամբը, և որ մարտիրոսական մահուամբ պատկուեցաւ : Անոր քաջագրութեանը՝ պատմութեան մի զարմանալի անխրաւութեամբը չը կըցաւ ունենալ այն հոշակը, որով ուրիշները օգտուած են, և սակայն գործին համար անոնց հետ հաւասար աշխատած էր : Նա մասնակցեցաւ իր քաղաքացիներուն և այն կուռղնեւուն հետ, որոնք շրջակայ գիւղերէն համախմբուած սոցալտանած էին Պրացիք (*), ուր սոցալտամբութեանը գրօղը պարզած և անկէ կրակուած դիմադրեցին քաջութեամբ իրենցմէ մի քանի անգամ ստուար զօրութեան մը :

(*) Պրացիք գիւղաքաղաքը Ռոսոր լեռանց շրջաններուն մէջն է, բնակիչներու արհեստն է հիւսնութիւն, և իրենց անտառներէն կըստ փայտի ու տախտակի վաճառականութեամբ կը զբաղին :

Սակայն ո՞րչափ մեծ կը ըլլայ յուսախարութիւնս, երբ հոն չեմ գտներ ոչ մէկ նոր հատոր : Ամուլ աարի մը անցուցեր ևնք գրականական տեսակէտով, ազատ միջավայրի ներշնչումովը գրուած ոչ մէկ լուծայ, հատորի ձեւով նետուած է հայու ազգաս մատենագրարանը :

Արդեօք հայ միտքը իր կրած տուայտանքներէն և պատրանքներէն ուժասպառ, արտասահմանին մէջ ալ անկարող դարձած է տեւական ու խորին աշխատութեան մը դիմանալու :

Ու երբ այս տխուր մտածումով համակուած կը պատրաստ իմ հրածեշտ տալ գրախօսականի երազներէս, ահա անկիւն մը կը նշմարեմ նիհար, մանրիկ տետրակ մը :

Հոլիասուն

Մ. Զ. ի երկրորդ փոքրիկ փունջն է սա, Թորոլուսիւնէն ետքը, Ես որ այնքան խստօրէն քննադատեցի առաջին փունջը, այս անգամ առանց պարունակութեանը գրական ալժեքին խորը միտքուելու, արժանիքի առաջին բարենիշ մը կը շնորհեմ երիտասարդ հեղինակին. որ քաջութիւնը կուենայ թէեւ փոքրիկ բայց երկրորդ տետրակով մը Պուլկարիոյ հայ հրատարակութեանց մէջ միակը ըլլալ :

Այս առիթով կը յիշեմ որ սակէ առաջ Պուլկարիոյ մէջ եղած երկու հրատարակութիւններ իրենց կողքին վրայ կամ յատկաբանին մէջ, Մամուլի սակ կամ քիչ ժամանակէն հրատարակուելիք նոր գիրքերու խստաւ մեքեր կը կրէին :

Ո՛ւր մնացին անոնք հեղինակները ինչո՞ւ չի պահեցին իրենց խօսքը :

Այս ինչո՞ւներուն մէջը ու ահա աչքիս կը հանդիպի Շարժումի ԶԱՂթ թուոյն խմբագրականը, ուր նոյն դիտողութիւնները կը ըլլուն թէ՛ մեր մտաւոր սթեքը բոլորովին անգործ վիճակի մէջ են, ժողովուրդին ամէն դասակարգէ կը պակսին կարգաւոր գիրքեր :

Բայց մի՞թէ այս ամբութեան ամ-

բողջ պատասխանատուութիւնը գրողներուն վրայ միայն կը ծանրանայ, անոնք որ իրենց առաջին հրատարակութիւնը ունեցան, ի՞նչ բան ետ կեցուց զիրենք երկրորդէ մը, Մի՞թէ գոհացաւ իրենց փառասիրութիւնը անգամ մը տպուած տեսնելով անունին հատորի մը վրայ, և կամ կարծեցին իրենց ամբողջ պարտականութիւնը կատարած տեսնել :

Իմ կարծիքով մեղաւորը չէ թէ հեղինակն է, այլ ժողովուրդը, որ նեղ դրութեան մէջ, սակայն միշտ գրամ կը գտնէ վնասակար հաճոյքներու բայց ոչ գիրքերու. մեղաւորը մեր հարուստներն են, որ իրենց մեծածախս վայելքներուն մէջ կը մոռնան գրողն ու գրականութիւնը :

Ի՞նչ ընէ խեղճ հեղինակը, երբ երկար օրերու տքնութեանց արդիւնքը եղող հրատարակութենէն կը մնայ իրեն չէ թէ չա՛հ, այլ չի ծախուած օրինակներու վէճ մը և խոշոր պարտք մը. և այդ յուսահատեցնող երեւոյթէն և իրականութենէն ինչպէս սիրտ ընէ նոր հրատարակութեան մը ձեռնարկելու :

Բայց ինչ որ անհատաբար կարելի չէ իրագործել, նոյնը կարելի է գլուխ հանել հաւաքաբար :

Թիֆլիզի Հայոց Հրատարակչական ընկերութիւնը, իրաւամբ ազգային ամենակարեւոր հաստատութիւններէն նկատուած է, որ մէկ կողմէն նախախնամութեան պէս բան մը եղած է հեղինակներուն և թարգմանիչներուն, անոնց աշխատասիրութիւնները գնելով, միւս կողմէն իր աժանագին հրատարակութիւններովը մեր աղքատիկ մտտենագրանները կը ճոխացնէ :

Կարելի չէ՞ միթէ Պուլկարիոյ հայրութեան մէջ ալ կազմակերպել այդպիսի օգտակար ընկերութիւն մը, հոգ չէ մերը թող կովկասեանին պէս արեւ մը չըլլայ, այլ պարզ լուսնկայ մը որ իր տկար գոյքերով լուսաւորէ Պալքանեան երկիրներու հայրութիւնը :

Կարժէ որ մամուլը այս հարցը արծարծէ իր էջերուն մէջ :

ԵՐՈՒԱԶ

(—)(—)

Կուրը ասոր օրէ ի վեր կը շարունակուէր :

Ապագամբերը առանց դեկլարարի, դիտուած փոքրիկի և չսփոփողը հրացաններով, սոցալտանած իրենց ինքնահնար խրատներուն մէջ ու փայտէ պատնէշներուն ետեւը՝ քաջութեամբ կը կռուէին. իրենց յօժար կամքովը ընտրած վոյլտաններու հրամանատարութեանը ներքեւ, ընդդէմ հաղարուոր պաշխօզութեանը, որոնք Զիլիպէէն, Թ. Բաղարճըզէն և Ռոսոր լեռներու ամենահեղաւոր անկիւններէն իջնալով, հետեւակ, ձիւտը, մի քանի յայտնի պէլերու առաջնորդութեամբ, ուրախութեամբ հոն վազած էին, երբեմնի իրենց նախնիքներուն պէս յաղթական դափնիներով և սուրով ևս վերադառնալու յուսով : Պաշխօզութեանը թիւը օրէ օր կը սոււարանար :

Կուրային ամէնքն ալ գոռոզ, համոզուած այն մտքով՝ որ իրենց երկուսիքը միայն պիտի ահարկէր այդ հատարակ որմնագիրներն և զիւղացիները, որոնք միւսնադմից խոռվա-

բարներ դարձած էին, և իրենց զայնոյթը մղեցնում թեան կը հասնէր անոնցմէ անյուսալի ընդդիմութիւն տեսնելով : Գիւղը յարձակումով գրաւելու բոլոր փորձերը ունայն կը դառնան, մի քանի արշաւանք ետ կը մղւին :

Հուսկ յետոյ զօրք կը հասնի. առաւօտ մը արշալոյսին սոցալտամբերը կը դիտեն որ Չանաքչի գիւղի սարահարթներուն վրայ թուրք վրաններ տնկուած են և մի քանի թնդանօթներ, շար նայուածքով գիւղին կը նային : Մի քանի ուս մը գիւղին վրայէն սուրալով կանցնին :

Ինքնապատպանութիւնն ու դիմադրութիւնն անկարելի են անօգուտ էր ալ : Ապստամբներուն առաջնորդները ու զինաւորները ժողով կը կազմեն և որոշում կուտան, քաղաքը ու հոն ապաւինած գիւղացիները ազատելու միջոցներուն վրայ խորհիլ : Երկիրներին պատուիրակութիւն մը կը նորոգել և կը զրկել թիւրք բանակը, փաշային ներկայանալու : Սա ան Հասան փաշան է որ Ռուս-թուրք

կուրին նիկոբոլի հրամանատարն էր և զոր Ռուսներուն յանձնեց : Պատուիրակութիւնը կը յայտարարէ թէ գիւղացիքը պաշխօզութեանց կը պաշտպանուէին, վախնալով որ գիւղը չաւերուի, բայց կանոնաւոր զօրքին դէմ գէնքերը կը յանձնեն :

Հասան փաշան այս յայտարարութիւնը իր հնազանդութեան արտայայտութիւն կը ըլլաւ և իսօք կուտայ գիւղը պահել, միայն պայմանաւոր թէ թէլէշքովը ժամէ մը իրեն յանձնուի, եթէ ժամէ մը թէլէշքով իր ձեռքը չըլլայ գիւղը հողի հետ պիտի հաւասարեցնէ : Պատուիրակութիւնը կը վերադառնայ այս սոսկալի առաջնութեան վիշտէն ընկճուած, զոր ընդունելով պէտք էր ի գործ դնէր, և առանց շեղելու, առանց մէկու մը իմաց տալու, կերթայ ուղղակի թէլէշքովի տունը :

Երբ արդէն իր գործը կատարած էր՝ թէլէշքով պահուած էր իր տունը պատուիրակները իր թագստողը գնացին և փաշային առաջարկը յայտնեցին : Թէլէշքով դուստտած անոնք

Սա չափը միայն բան մ որ մեր դատարարութեան օրը, եթէ 5 հաս անչափահաս տղաք վկայեցին որ մենք աղայիդ զաւակը գանակոծած եմ, անդին 4 ուսուցիչ, 1 քահանայ և ամբողջ բարձրագոյն կարգէն կանչուած տղաքը հաստատեցին, թէ՛ ես գաւազան գործածած չեմ: Իհարկէ խուլ չէիր, և ամէն բան գիտես, սակայն ի՞նչ ընես... պաշտօնով! մը զբաղած էիր և զբաղած ես...

Գալով թէ ես ակռայ կոտորեմ, կամ ուրիշ անգամներ ալ նոյն սղան ծեծեր եմ, ասոնք վայրենի նենգամտութեամբ շինուած սուտեր են՝ որոնց հեղինակը դուն կրնայիր ըլլալ, միայն դուն, ո՛վ գտնուի «կայծ»-ի:

«Ազգած ձեռովդ» քեզի պիտի ապացուցանեմ թէ ըսածներդ անձին գէ՛մ հոթենթօթեան զըրպարութիւններ են լոկ:

Սակայն որպէսզի ինչպէս դուն կը փափաքես, «ըսի ըսաւններով հասարակութիւնը չի տատակացնեմ, կուզեմ «վճռական» միջոցի մը դիմել:

Ուստի կառավարկեմ որ եթէ մարեւելք կայծի մը չափ մարդկային արժանապատուութիւն մը նացած է վրադ, եթէ չարաչար խայտառակութեամբ երկրորդ շունիս, առանց դիմակի դէմս ելիր ու ես վայրկեանի պիտի հասկցնեմ քեզի ու ամենուն, թէ որո՞նք են քու բարոյական պատկերդ կալմանը լըրճուկ հաշիւները և զլուծելի նկատումները որոնց համար, էնդրիկներ լարելու ետեւէ ես շարունակ:

Ահա կըսեմ քեզի, աշխարհի ամենէն կեղտոտ արարածն ես, արժանի՛ միայն սառն արհամարանքի, եթէ նորէն փախչիլ փորձես:

Գիտնաս սակայն որ ա՛լ օձիբդ

ձեռքէս փրկելիք չունիս: Հասկցա՞ր: Թէեւ ուրացողի մը ձեւն ունիս, սակայն մոռցած ըլլալու չես որ ինծի հետ առաջին կամ վերջին տեսութեամբ մը, թունալից կեղծաւարութեամբդ զիս շողորթել փորձած օրդ, քու բերնովդ քու «կայծ» ըլլալը խոտովանած ես ինծի, և Տեար Մանուկ թովմասեանին, որուն անկեղծութեան գէ՛մ կասկածելու պատճառ մը ունեցած չեմ ես մինչեւ օրս:

Նոյնպէս անպայման գիտնալու ես որ անձնականի գէ՛մ գրող մը, ան ալ քեզ նման ուրիշին գրածին ապ ստորագրող մը, պարտական է իր անունով մէջտեղ գալ՝ եթէ վատ մը, ոտքէն մինչեւ գլուխը փճացած մը չէ:

Այս առաջարկութիւնը կընեմ քեզի, որովհետեւ քեզ պէ՛տ անփեղցփեղութիւններ դուրս տալով գործ չի վերջանար:

Դուն դիմակի տակ ծածկուած յայտնի հաշիւներովդ յստիտեան պիտի գրես ինձ համար թէ ակռայ կոտորած եմ, ես ալ պիտի պատասխանեմ, թէ «սուտ ես դուն»:

Ասոր վերջը չի գար «Վաստ»-ը ես ըսածներուդ ճշմարտութեանը, պիտի կրնա՞ս հաստատել, թէ ես ակռայ կոտորած եմ, լաւ, մէկդի նետէ նախ սա դիմակդ, և, եթէ կը համարձակիս, ստորագրե՛ այդ զրպարտութեանց տակ, և ահա, նորէն կը կրկնեմ, «քու ուզած ձեռովդ» պիտի ապացուցանեմ թէ գրածներովդ դուն սուտ կը խօսիս, խաբեբայ մըն ես:

Յտեսութիւն:

ՎԱՀԱՆ ՇԱՀՐԻՄԱՆ
Փ. Պօլիս, 15 Յուլիս
—)(—

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Խնդրեմ բարեհաճիք առաջին առիթով և նոյնութեամբ հրատարակել ներքակ մէկ նամակս և մէկ յայտարարութիւնս, զորս զրկած եմ «Իրաւունք» լրագրի պատասխանատուին:

Մնամ յարգանքով
Պէտրոս Գ. Պօլսեցեան
* * *
Առ Տօրթ. Մ. Վարդանեան
Պատասխանատու «Իրաւունք» լրագրին

Չեմ պատասխանատուութեան տակ հրատարակուած լրագրին մէջ, ատենէ մը ի վեր անձիս շուրջը բոլորովին անկապ և փաստէ զուրկ հրատարակութիւններ կըլլան, որոնք բացարձակապէս սուտ են:

Ըսի ըսաւներով ժամանակ չի կորսնցնելու համար վճռական միջոցի մը կուզեմ դիմել, և վստահ ըլլալով որ դուք անձնապէս որ և է հակառակութեան ոգի չունիք և ձեր պատասխանատուի պարտականութիւնը կը ճանչնաք, ուղղակի ձեր հասցէին կըղրկեմ հետեւեալ յայտարարութիւնը խնդրելով որ բարեհաճիք առաջին առիթով և նոյնութեամբ հրատարակել զայն «Իրաւունք»-ին մէջ:

Յարգանքով
Պ. Գ. ՊՈԼՍԵՑԵԱՆ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

«Իրաւունք» լրագիրը իր 49 դրութիւն մէջ մասամբ տպելով իրեն զրկած մէկ հերքմագիրս, իր կողմէն մեկնութիւն մըն ալ աւելցուցած էր, որուն համեմատ ես իբր թէ «Դպրոցասիրաց» անուն ընկերութեան մը պարտք ունիմ եղեր, և այդ պարտքս ալ ազգին պարտք ունենալ կը նշանակէ եղեր:

Չեմ ուզեր նախ երկար բա-

րակ վիճաբանել թէ՛ իրաւունք ունի՞մ այդպիսի պարտք մը, եւ կարելի՞ է մէկուն ուրիշ ընկերութեան մը պարտքը ազգին պարտք նկատել:

Եւ սակայն իրաւունք լրագրին տուած մեկնութեան ինչ գոյն ունենալը երեւան հանելու համար, ներկայիս կուգամ յայտարարել, թէ թուականէս (*) մինչեւ 15 օր, ազգային որ մարմինը և ընկերութիւնը որ ինչ ու է պահանջ ունի, թող ներկայանայ ուղղակի ինծի և կամ գիմէ գատարան ու հաստատէ իր պահանջը: Այս պայմանաժամին մէջ, երբ անհատ մը կամ մարմին մը ազգին անունով ինծի չի ներկայանայ և կամ դատարան չի դիմէ ու չի հաստատէ իր պահանջը, իրաւունք լրագիրը բացարձակ «զրպարտիչ, խաբեբայ ու ազտոտ» պիտի հռչակեմ հրապարակաւ:

Պ. Գ. Պօլսեցեան
Ֆիլիպէ, 12 Յուլիս

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱԶԳ

Հոգաբարձութիւնս հարկ կը համարի ծանուցանել թէ՛ ի նպաստ քաղաքիս Ազգ. Երկսեռ վարժարանաց 120 կտոր խնամով և նուրբ ճաշակաւ պատրաստուած ձեռառագործները վիճակահանութեան քրած է, վիճակահանութեան մէն մի տոմսի գինը 1 Ֆրանք արժողութեամբ:

Լիայոյս եմք որ լրագոյ հայ հասարակութիւնը բազմաթիւ ազգատ և որբ մանուկներու կրթութեան գործը ապահովելու մեր այս ձեռնարկը պիտի հաճի քաջալերել, փութալով գնել վիճակահանութեան այդ տոմսերէն:

Ի դիմաց Հոգաբարձութեան Ազգ. Երկսեռ վարժարանաց Վառնա (Կնիք)

—)(—
(*) Անշուշտ թերթիս թուականէն հաշուելով:
Մ. Խ.

առջեւը կանգուն, սչքերը վար աւած. անշարժ իրիւր կայծակն հար, զանոնք մտիկ կընէ եւ երբ պատուիրակները կը վերջացնեն իրենց խօսքը մի քանի վարկեան անարկու լուծիւն մը կը տրե՛, լուծիւն մը որ հոգեվարքի քրտինքներով կը ծածկէ անոնց ճակատները ու մահուան կակիծներով կը գալարէ անոնց աղիքները, Բէթլէշքով յանկարծ իւր լուրտաբար գլուխը վեր կը վերցնէ ու կըսէ:

— Պիտի երթամ աւելի լաւ է որ մէկը կորսուի, քան ամբողջ գիւղ մը հիմնայատակ ըլլայ:

Անմիջապէս ամէն ինչ կը յայտնուի. Բէթլէշքով իսկոյն կը շըրջապատուի անեցիներէն. հայր, մայր, երեխասարդ կին եւ փոքրիկ մանուկներ սրտապատառ ողբեր ու կոծեր կարձակեն, տրտմանիմ նախազգացում մը ամէնուն ալ սիրտերը կը սեղմէ ու հոգիներն կը ճմլէ, նա խօսք էր տուեր, Արցունքը աչերին կը գրկուի ամէնուն հետ եւ թուրք բանակատեղին կուղեւորի:

Երկրորդ օրը յիսուն Պրացիքցիներ եւ շրջակայքի գիւղացիներ իբրև գլխաւոր յանցաւորներ դուրս կըլլային գեղէն շունամով եւ երկաթէ կապիչներով կապուած եւ թուրք զինուորներէ շրջապատուած: Գիւղէն ոչ այնքան հեռուն, դէպի Թ. Բազարճըք ասորդ ճամբէն մէկ քայլ անդին, կը նշմարեն սոսկալի խարոյկ որ կը վառի, եւ երբ դէմ աւ գէ՛մ կուգան, զարհուրելի տեսարան մը բոլորովին կը ստնմեկէ զանոնք, կրակին վրայ կենդանի մարդ մը կը խորովուէր, այլուսղը Բէթլէշքովէ էր:

Պ. Էլկար յիդ պատմութեան մէջ յիշուած այս Ապրիլեան ապստամբութիւնը որ 1876ին Ապրիլ ամսոյն մէջ բոլոր Պալատի, Ռոտորի եւ Արեւմտ-Կորայի պուլկար գիւղերը ու քաղաքները բացածաւ հրդեհի մը պէս բռնկուցած էր, ու քիչ մը յետոյ, Մայիսին՝ Պօթէվ իր

հերոսներուն հետ փութաց Գաւառը ձեզքելով Պալատի մանիշակներու երանգներուն հետ իրենց արիւնին թոյրը խոտնելու. ոչինչ արդիւնք տուին. եւ ոչ ալ փառք իրենց ինկող հերոսներուն, միայն թալան ու զոհ պատճառելով այդ արիւնքով եղած պուլկար ժողովրդին. սակայն նա որքա՞ն փութացուց յաջորդ հակոյ դէպքերը: Շատ անիւրեւ եւ անարգար քննադատութիւն մը ըրած կըլլանք, երբ գատափետենք այդ զեկավարները, որոնց պատրաստութիւնը այսպիսի տխուր վախճան ունեցաւ: Նա բնական տարրերին պայթում մըն էր, մի հզօր ներշնչման եւ արեքցողութեան հետեւանքն, եւ այն րոպէին երբ արծաթճուղեցաւ, նա արդէն իր բոլոր ուժերը ի գործ դրած էր եւ պէտք էր շողողար, ուրիշ ելք չկար: Կեռասթիղանութիւնները, կայծահոն հրացանները, հայրուկներու առիւծի զինանշանները իրենց գլխարկներուն վրայ եւ ապստամբական երգերը, ահա ասոնց մէջ կը ռահմանափակուէին

բոլոր պատրաստութիւնները եւ կուռին անհրաժեշտ եղող միջոցները: Երեւոյթ մը որ նոր կը կալմուէր, պէտք էր սիրտերը տաքացընէր եւ թուրքի առաջին հրացանի պայթումէն ցուէր: Յեղափոխական միջոցները ոգեւորէր, նա ուղեղը կը թմրեցնէ եւ սիրտը կը խանդավառէ, ժողովրդի նման արբած, ներշնչուած էին նաեւ առաջնորդներն ալ որոնք ժողովրդէն ալ աւելի գինով տէր չէին իրենց դատողութիւններուն, եւ հաւատացած էին իրենց քաջագործութեանը, եւ իրենց երազանքի իրականութեանը համար իրենց հոգիներու ամբողջ ուժը ու կորովը տուին, ու երբ քայքայուեմ եկաւ՝ տուին նաեւ կեանքերն ին ալ:

Յարգանքով խոնարհինք անոնց գերեզմաններուն առջեւ
Թարգմ. Թ. ԹԱԿԻՑ
Սօֆիա
—)(—

